

մարդիկ առաջին առթիւ զանոնք պատուհասեն. որո՞նք են այդ անօրէնները:

— Մուշեղ՝ Վահեուկնեաց ցեղէն, Վահրամ՝ Տրուկնեաց ցեղէն, եւ միւս Վահրամ թիկնապահ իշխանին, միաբանելով իրենց հետ ազատաց գունդը, գաղտնի պատգամաւոր դրկեցին Բուղայի կապել եւ մատնել իւր ձեռքը Աշոտ եւ իւր հաւատարիմները, որ բոլոր բազմութեամբ ապաստան եալ էինք Նկանի բերդը: Այո վիճակը տեսնելով իշխանը՝ գնաց եւ անձնատուր եղաւ թշնամուոյն. մենք էլ պարտաւորեալ իւր օրինակին հետեւեցանք, բայց երբ տեսանք երկրորդ կարաւան մը, ուր մեր կանայք եւ զաւակունք գերի կը վարէին ի Բաղդատ, եւ որովհետեւ զարմանալի յիմարութեամբ թշնամիք մեր զէնքերը չէին առած մեզմէ, ձայն տուինք իրարու զարկինք ցրուեցինք խումբը եւ կարաւանն ազատեցինք. բայց ո՞ր փախչիլ կրնայինք, Ամիկայ (ամրոցին կողմը դէպի ծով զմեզ թշնամին կը վարէր, երբ մենք պատնէշ եղած մեր ընտանեաց՝ կռուելով կ'ընկրկէինք մտքերնիս դրած ծովակուլ լինել քան թէ գերութեան մատնուիլ. եւ իրօք ծովեզրը ետեւնիս եւ թշնամուոյն բազմութիւնն առաջնիս, «քաջ եղիք, նաւ գտանք» ձայնը մեր զօրութիւնը բազմապատկեց, յուսահատ վերջին յարձակմամբ թշնամին ետ մղեցինք, կանայք եւ որդիք մտտան նաւերը, եւ ես ու սա ութը տղաքը միատեղ ինքզինքնիս նաւերը նետեցինք եւ բացուեցանք: Բայց ի՞նչ սոսկալի փրկութիւն է այս. ահա սոքա կուլան փոքրիկ աղջկանս կորստեան վրայ, նոյնպէս ամենքը կամ հայր ունէին, կամ եղբայր, կամ քոյր, որուն վրայ պիտի ողբան յաւիտեան. եւ չենք գիտեր ո՞րն է աւելի ողբալի, հոգուոյ կորուստը թէ մարմնոյ:

— Աստուած ողորմած է եւ արդար, Մերուժաններ ու Վասակներ չեն ազատիր իր բարկութենէն, հիմա մենք տեսնենք թէ ի՞նչ բանի պէտք ունին այս տիկիները, եւ մենք ի՞նչ ծառայութիւն կրնանք ընել իրենց եւ ձեզի:

— Յիրաւի ես էլ չգիտեմ թէ ո՞վ ինչ բանի պէտք ունի. միայն այն գիտեմ, որ երեք օր է հացը բերնես վար չերթար: